տուղար եւ կ'ընդօրինակէ բազմաթիւ ձեռագիրներ. որոնք են. 1⁰— Աւետարան մը. որուն յիշատակարանն է հետեւեալը. «Ս. Աւետարանս աւարտ եղև ի դառն և վշտաշատ ժամանակիս, ձեռամբ յոգնամեղ Յովհան սուտ եւ խաբեբայ Խիզանցոյ... ի Ս. Քաղաքս Երուսաղէմ. ընդ հովանեաւ Ս. Յակոբայ Տեառնեղբաւր Աթոռոյս, և Ս. Յակոբայ գլխատանս որդւոյն Զեբեթեայ. ի հայր. Ս. Աթոռոյն տէր Գրիգոր արհուն. ի թուականիս հայոց ՌՀԶ (=1627)... յիշեցէք զՅոհան Հիզանցին և զծնողսն իմ զտէր Յովհաննէսն և զԱհլին... և զտէր Մարտիրոս Թղթիս կոկողն.»: Այս ձեռագիրին մէկ յիշատակագրութենէն կը հասկցուի որ՝ Մարկոս Եպս. Նիկոմիդացւոց 1687ին սոյն գրչագիրն կը նուիրէ Նիկոմիդիոյ Ս. Աստուածածին եկեղեցիին (Արարատ. 1905 էջ 732—33): 2⁰— Շարական ՌԶ (=1631), ուր գրած է հետեւեալ յիշատակարանը. «Եւ արդ գրեցաւ եղանակաւոր տառս, և Ածաբան. կտակս և խնկալի տուփս, և ծաղկաւէտ բուրաստանս. և պտղալի դըրախտս. եւ քաղցրաճաշակ հոգեղէն կերակուրս որ կոչի Շարակնոց. ի լաւ և յընտիր աւրինակէ. որ է խղիկ կոչեցեալ, ձեռամբ բազմամեղ և անիմաստ գրչի Յովհան Հիզանցւոյ. գըրեցաւ ի Ս. Քաղաքս Եէմ. ի դուռն Ս. Յակոբայ գլխատանս, ի թվ. ՌԶ (1631) ի յառաջնորդութեան Ս. Աթոռոյս Տէր Գրիգոր հայրապետին: Արդ ցանկացաւղ եղեալ սմա մահտեսի Կիրակոս երէց՝ որ ստացաւ զցանկալի բուրաստանս յիշատակ հոգւոյ իւրոյ՝ ծնաւղացն՝ Միքայէլին և Ալթընին, և եղբարցն և ամ. արեանաւոր մերձաւորացն կենդանեացն և ննջեցելոցն. դարձեալ յիշեսջիք զուսուցանողն իմ զՄինաս սրբասնունդն կրաւնաւորն որ բազում աշխատանք ունի ի վերայ իմ ի յուսուցանելն զիս՝ որոց թողցէ Քս. զյանցանս իւր ամէն:...» (Tisserant Թ. 80. էջ 179—170): 3⁰— Աւետարան մը. ՌԶ (=1631) Թուին, որուն ստացողն է Տօնապետ կամ Տօնիկ, Ս. Յակոբի թարգմանը (ՄՁ. Թ. 1945). 3⁰— Հաւաքածոյ մը, 1632ին և Քաղուածոյ Մատթի Աւետարանին, 1633ին Բեթղեհէմի մէջ ընդօրինակուած. նոյն ձեռագիրը կը պարունակէ Գրիգոր Պարոնտէր պտրքի. գործունէութեան յիշատակարանը: Նոյն թուականին դարձեալ կ'ընդօրինակէ Քաղուածոյ Մատթեոս Աւետարանչին ուրիշ մէկ օրինակը «ի Ս. Քաղաքս Երուսաղէմ ի դուռն Ս. Յակոբայ